



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄԷ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՐԾԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՀԱՊՐԱՍՏԱՆԸ:

Օտարաբաղադրացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով՝ Тифлис. Редакция «МШАКЪ»։ իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Զէմսովոյի համադարձակարգային պէտք է լինի. Հրապարակական մեթոդներով. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէնք. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Ամերիկայից. — Հնդկաստան. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ԶԵՄՍՎՈՐ ՀԱՄԱԴԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԵՏՐ ԵՒ ԼԻՆԻ

Երկու տարի առաջ Թիֆլիսի նահանգի ազնուականութիւնը որոշեց մի ծրագիր մը. շահել և առաջարկել կառավարութեան Թիֆլիսի նահանգում գէմսովոյի ինքնավարութիւն մտցնելու համար: Այժմ, ինչպէս հաղորդում են լրագրիւնները, Թիֆլիսի ազնուականութեան այդ միջնորդութեանը միացրել է իր միջնորդութիւնը և Ստավրոպոլի նահանգի ազնուականութիւնը:

Ստավրոպոլի նահանգական ազնուականութեան ժողովում, որ բացվեց անցեալ տարի դեկտեմբերի 17-ին, 16 ազնուական-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՏԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՆ

Լայպցիգի փետրվարի 1/13-ին

Գերմանական բաշխատող ներկայ սեփական ըստման օրէց սկսած՝ գուցէ զբաղմունքի այն-պիսի կարևոր և ծանրակշիռ նիւթ չէր ունեցել: Ինչպիսիք ներկայացաւ փետրվարի 3-ին: Այդ օրն առաջարկվեց ընդհանուր գերմանական պետութեան համար կազմված չարագրական օրէն-նադրելի նախագիծը, որը, չորս օրվա երկարատև վիճաբանութիւնների նիւթ դառնալուց յետոյ՝ վճռվեց յանձնել 21 անդամներից բաղկացած մի մասնաժողովին ըննութեանը:

Արդարադատութեան միջնորդութեան բար-տուղար Նիքսթրիցը, որը ներկայ էր փետրվարի 3-ի նիստին, վերջինեալ նախագիծի առիթով մի երկար ձառ արտասանեց: Նա նկատեց, որ առաջարկվելի (օրինագիծը), որ ամփոփում է միայն սեփականութեան և ընտանեկան ինքիւր-նեքի հետ կապ ունեցող իրաւունքներ, — ամբողջ բաւարար չէր աշխատութեան պտուղ է: Այդ աշխատանքին պարբերաբար մասնակցել են երեք մասնաժողովիւր: Առաջին մասնաժողովը օրինագիծը կազմուելու միտքն է յղացել, երկրոր-դը, որ ներկայացրել է Գերմանիայի առաջնա-կարգ իրաւագէտների մի շրջան — օրինագիծը կազմութեամբն է զբաղվել, իսկ երրորդը, որ բաղկացած է եղել ժողովրդի ընտրած ներկայա-

ներ մի առաջարկներկայացրին ժողովին, որով խնդրում էին միջնորդել կառավարութեան առաջ՝ մտցնել Ստավրոպոլի նահանգում գէմսովոյի ինքնավարութիւն: Ժողովը հա-մակրութեամբ վերաբերվեց այդ հարցին և միաձայն որոշեց կազմել մի առանձին յանձ-նա ժողով՝ յարուցված հարցը աւելի ման-րամասն մշակելու համար, իսկ ազնուակա-նութեան պարագլխին յանձնվեց նահան-գային ազնուականութեան արտակարգ ժո-ղով գումարել՝ և ընել յանձնաժողովի գե-կուցագիրը ու մշակած ծրագիրը:

Տարակից չէր կայ, որ Կովկասի երկու նշանաւոր նահանգների ազնուականութեան այդ միջնորդութիւնները, եթէ նոյն իսկ շուտով էլ չիրականանան, այնու ամենայնիւ դրանով Կովկասում գէմսովոյի ինքնավարութիւն մտցնելու առաջարկը հրապարակի վրա է դնում և օրվա հարց է դառնում: Տարակից չէր կայ նոյնպէս, որ ազնուակա-նութեան այդ բոլոր արժանի է ամենայն համակրութեան, որովհետեւ գէմսովոյի ինքնավարութիւնը, որի բարիքները վայել-լում է ներքին Ռուսաստանը, իր 30-ամեայ գոյութեամբ ապացուցել է, թէ նա մի վի-րին աստիճանի օգտակար, նպատակայար-մար հիմնարկութիւն է ժողովրդի մոտաւոր և անտեսական զարգացման համար:

Օրէնքը սահմանել է գէմսովոյի գործու-նեցութեան ամենայն ասպարէզ՝ ժողովը-դական տնտեսութեան, կրթութեան և ա-ռողջապահութեան գործին օգնութիւն հասնելու համար և նա, արդարեւ, շատ մեծ ծառայութիւններ է մատուցել ուս-ժողովրդին, և նոյնը կը մատուցանի կով-կասեան ժողովրդին: Այժմ մի առիթ չը կայ կասկածելու, որ գէմսովոյի ինքնավարու-թիւնը նոյն շոշաւիկի հետեւները չի արտադրի նաև Կովկասում և նոյնքան օգտակար հիմնարկութիւն չի հանդիսանայ, միայն թէ պէտք է մտցնել նրան մեր երկ-րում այնպէս, ինչպէս նա գոյութիւն ունի ներքին Ռուսաստանում: Երկուսն էլ գէմսով-ոյի ինքնավարութիւնը կարողացել է օգ-տակար լինել միայն իր լիակատար ձեւով և բնաւորութեամբ:

Երկուսն էլ վերաբնակ է մասնագէտ-իրաւա-բանների կազմած գործը և այդ շատ հիմնաւոր կերպով, որովհետև վերջինների աշխատանքը լեզաբնիկային բնաւորութիւն է ունեցել, չը-նորհիւ այն հանգամանքի, որ հեղինակները հե-ռու են եղել այն եռուն ասպարէզից, ուր խը-փում է հասարակական կեանքի զարկերակը: Ուրեմն վերջին մասնաժողովը այդ կեանքի հա-ւատարիմ արտայայտութիւնն է եղել ըստ երե-ւոյթի:

Հաւաքուցող այնուհետև անցնելով պետութեան ղեկավար մասերում տիրող խռովածաղանձ օ-րէնքների նկարագրութեանը՝ վիճակագրական մի ընդհանր հետաքրքիր փաստեր հարուրեց, որոնք մի-ընդհանուր օրինագիծը ունենալու անհրա-մեջութեան ամենալաւ ապացոյցներ կարող են համարվել: Այսպէս՝ գերմանական պետութիւնը կազմող 50 միլիոն բնակչներից 70% ներկա-յուն են իրարկրկն է սաքսոնական թագաւորու-թեան օրէնքներին, 17% — ֆրանսիական, 33% — հոլանդական և 43% — պրուսական: Բացի դրա-նից, Գերմանիայի արեւելեան մասում միայն գործ են անում պետական լեզուով գրված օրինագը-րեր (պրուսական և սաքսոնական), միջին մա-սում գործ գրված օրինագրի լեզուն լատինե-րէնն է (մի ընդհանր տեղ մինչև իսկ յունարէն), իսկ արեւմտեան մասում տիրապետող օրէնքը — Վի-սթրիցի Code civil — լեզուն ֆրանսերէնը (Մի-այն բաղկէումն է գործ անվում ֆրանսիական օ-րինագրի գերմաներէն թարգմանութիւնը): Այս-պէս, ուրեմն, Գերմանիայի բոլոր բնակչների մօտաւորապէս 46% զօրն է մայրենի լեզուով

Զէմսովոյի ինքնավարութիւնը Ռուսաստա-նում համադասակարգային է, այսինքն՝ նրա գործունեութեանը մասնակցում են բոլոր դասակարգերը, առանց որ և է խտրութեան: Այդպէս էլ պէտք է լինի նա և Կովկասում: Սակայն, ինչպէս երևում է այդպէս չէ կա-մենում Կովկասի ազնուականութիւնը, որով-հետեւ Թիֆլիսի նահանգային ազնուակա-նութիւնը գէմսովոյի ինքնավարութիւնը մտցնելու իր առաջարկը պատճառաբանում է նրանով թէ՛ «անհրաժեշտ է բարձրաց-նել ազնուականութեան նշանակութիւնը այն հարցերի լուծման մէջ, որոնք կապ ունեն տեղական շահերի և պէտքերի հետ»:

Այդ տեսակ պատճառաբանութիւնները, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատում է «Съверный Вѣстник» ամսագիրը, ցոյց են տալիս, որ Թիֆլիսի ազնուականութիւնը այնպիսի գէմսովո է ցանկանում, որտեղ նա լիակատար տէր հանդիսանալ, իսկ այդ տեսակ ձգտումը արժանի չէ որ և է քա-ջակրութեան և առանձին պատիւ չէ բե-րում «առաջին դասակարգին»:

Եթէ գէմսովոյի ինքնավարութիւնը հան-գիսացել է մի համակրելի, օգտակար և օրինակելի հաստատութիւն, այդ միայն այն պատճառով, որ նա եղել է համադա-տակարային և ազատ որ և է կրօնական կամ ցեղական յատկութիւններից: Զէմսով-ոյի այդ տիպը ստեղծել է Ալեքսանդր II-ի վերանորոգիչ ոգին և որ և է առիթ, հիմք և նպատակ չը կայ շեղվելու այդ ոգուց, ձգտելով ուրիշ տեսակ հաստատութիւն ստեղծելու: Եւ դժուար թէ նոր տիպի հաստատութիւնը կարողանայ բարձրացնել ազնուականութեան նշանակութիւնը:

Ազնուականութեան նշանակութիւնը ինքն ըստ ինքեան կը բարձրանայ և նա դերա-կշիռ դեր կը կատարէ, երբ կաշխատէ ի-րագործել կեանքի մէջ, ժողովրդի բոլոր դասակարգերը համար, գէմսովոյի ինքնա-վարութեան բարիքները, երբ նա կը զեկա-վարէ, եթէ միայն ունենայ պատրաստակա-նութիւն, երկրորդ և երրորդ դասակարգերը գէմսովոյի ինքնավարութեան ասպարի-

գրված օրէնքներից և նա ստիպված է իր իրա-ւունքները օտար աղբիւրների մէջ որոնել...

Ներքինից յետոյ խոստովանեց, որ ներկայ օրինագիծը թէև երկարատև աշխատութեան արդիւնք է, այնու ամենայնիւ, բացարձակապէս անթերի համարվել չէ կարող, ի հարկէ, և մա-նաւոր անկարող է լինիլ բաւարարութիւն տալ այն բազմատարր կուսակցութիւններին, ո-րոնց ամբողջութիւնն է կազմում լայնատաղը, որովհետև կուսակցութիւններից իւրաքանչիւրը իր շահերին համապատասխանող պահանջներն էր դնելու: Նա վերջապէս իր ձառը հետեւեալ խօս-քերով. «Մասնաժողովը իր աւարտած գործը յանձնում է ձեռ իբրեւ աւանդ. հաճութեամբ ըն-դունելով այդ՝ զուր կարծածանաք ոչ միայն ամ-բողջ գերմանական ազգի շնորհակալութեանը, այլ և մեր ապագայ շատ հեռավոր սերունդների չեւր երախտագիտութեանը»:

Այս առաջնորդող-ձառից յետոյ սկսվեցին վի-ճաբանութիւնները, որոնց տեղութիւնը, ինչ-պէս յիշեցինք, շարունակվեց չորս նիստ անընդ-հատ:

Այդ ձառերից ամենանշանաւորն է սօցիալ-գէմսովոյանների ներկայացուցիչ՝ Ֆրոմիլի ձառը, որ ամբողջ գերմանական մամուլի առանձին ու-չադրութիւնը գրաւեց, «Այստեղ առաջարկվում է ազգային մի իրաւունք — այսպէս սկսեց Ֆրոմլէ — և առաջարկութիւնը աստիճանով է հետեւեալ նախադասութեամբ. «մի պետութիւն, մի պետ և մի իրաւունք»: Բայց դրանով կառուցանվում է ազգային մասնաբաժնութեան վերին կոթողը, ո-րով կարծում են պիտի նուիրագործվի պետա-

գում: Այդ է և պէտք է լինի ազնուակա-նութեան զիւսաւոր դերը և կոչումը: Անպայման ցանկալի է, որ գէմսովոյի ինքնավարութիւնը իրագործվի Կովկասում այնպէս, ինչպէս կազմակերպվել է նա օգոս-տափառ հիմնադրի ձեռքով, այն է՝ հա-մադասակարգային և համացեղային բնա-ւորութեամբ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՄԵՐԱՅՈՒՄ

Ֆինանսների միջնորդութիւնը, ինչպէս անցեալ անգամ հաղորդեցինք, ամէն կողմից ստանում է բազմաթիւ զանգատներ այն խաբեղայութիւնների և կեղծիքների մասին, որ կատարվում են առեւտրական դասակար-գի մէջ, և միայն մի միջոց է գտնում՝ դրանց վերջ տալու համար, այն է՝ մեր-կացնել խաբայութիւնը տպագրական խօս-քի միջոցով, և այդպիսով հեռացնել աս-պարէզից խաբայի մարդկանց:

Միջնորդութեան այդ կարգադրութիւնը շատ համակրելի է, և բոլորովին նպատա-կայարմար: Մամուլը, հրապարակական խօսքը ոչ միայն այդ տեսակ, իսկայէս պարզ դէպքերում, այլ աւելի խոշոր, բաղադրեալ և պատասխանատու գործե-րում մերկացնելով խաբայութիւնը, յան-ցաւոր ու վնասակար գործունեութիւնը, միջոց է տալիս, հասարակութեան ճանաչել և պատժել խաբայութիւն գործողներին:

Ֆինանսների միջնորդութիւնը հաստատ փաստեր ունի իր ձեռքին, որոնք ապացու-ցանում են, թէ ինչպէս արտասահմանեան գործարանատէրերը մեծ վնասներ են կրել, շնորհիւ Ռուսաստանի վաճառականների խաբայութեան: Վաճառականները ուղար-կել են Ամերիկայի գործարանատէրերին ապ-րանքի մի յայտնի նմուշ և խոստացել են տալ նոյն տեսակ ապրանք մեծ քանակու-թեամբ, իսկ ուղարկել են բոլորովին ստոր տե-սակի և վնասած ապրանք, որ մեծ վնասների մէջ է գցել գործարանատէրերին: Միջնորդ-ութիւնը արդէն հրապարակ է հանել այդ դէպքերը, մանրամասն հաղորդելով գործին

կան հիմնարկութեան թարմ յօդուներ... Ժողո-վրդի մեծամասնութիւնն այսօր ստանութեամբ է ընդունում այդ առաջարկութիւնը, որովհետև նա այդ մասին ոչ մի տեղեկութիւն չէ ունեցել: Հիմնաբար — իրաւունքների հաւատարմութեան գաղափարը — բացակայում է...

Իր ձառի շարունակութեան ընթացքում գէմսով-րանների ներկայացուցիչը ամենախիստ ջըն-նադատութեան ենթարկեց նշանաւոր իրաւաբան, Լայպցիգի համալսարանի պրոֆէսոր Բոմի մի ընդհանր խօսքի հայեացքները, որ նա յայտ-նել էր լայնատաղի փետրվարի 5-ի նիստում: «Պրոֆէսորը — նկատեց Ֆրոմլէ — երկէ այն կարծիքն էր յայտնում, թէ ժողովուրդն ինքն է զարգաց-նում իր իրաւունքը. բայց այդ իրաւունքի մա-սին իր կարգադրած յօդուածը ուսանողական սե-նեակում տեղի ունեցած աշխատութեան տպա-ւորութիւն էր թողնում միայն: Նա ասաց նաև թէ՛ պարտականութիւնը մարդու մղում է դէպի պաշ-տօն, իսկ պաշտօնը՝ դէպի հասկացողութիւն. բայց երկէ նա այս նախադասութիւնը ոչնչով չա-պացուցեց: Միթէ ճիշդ չէ յաճախ լավող այն արդարացի ձայնը թէ՛ ուսուցչապետութիւնը ոչ մի հասկացողութիւն չունի բանաւոր դասակարգին վերաբերեալ հարցերից (ծախահարութիւն սօցեալ-գէմսովոյանների կողմից): Պ. պրոֆէսորը կարծես մի ուսանողական խնջոյքով լինէր և միայն «Hip, hip, hurrah»-ն էր պակաս, որպէս զի ամենայն ինչ կատարեալ լինէր... Կատարեալ ապուշու-թիւն է մեզ օրէնսդրութեան երդուեալ թշնա-միւնը համարել. մենք երբեք չենք միտում այդ սկզբունքի և մեր մէջ եղած պատմական կապը:

որը իր անդամները դիտարկեցին և գանձապահի ձեռքով՝ բաժանվում է թէ տեղացի և թէ օտար աղքատներին, մեծ մասը անտէր և անճար որբեր, այրիներ և աշխատանքի անընդունակ տնայիններ, որոնք սովորական ժամանակին ա-մեն կողմից հաւաքվում են կոնսիստորիայի դռնով՝ ակնկալած օժանդակութիւնը ընդունելու: Հակառակ անցեալ տարիների սովորութեան՝ այլ կերպ վարվել և աղքատներին կոնսիստորիայի դռներից հեռացնել դատարկաձեռն՝ նրանց ամեն մէկին ցոյց տալով Բարեգործական ընկերութեան գրասենեակը, թվում է անհիմն, առանց ունենալու աչքի առաջ մի նոր հանգամանք, մանաւանդ որ կոնսիստորիայի անդամներին աւելի յայտնի կարող է լինել նպատակ խնդրող աղքատի վիճակը և տարակուսելի դէպքում ձեռնհաս՝ ստուգելու նրանց խրաքանդիւրի ծխական քաճանայի միջոցով, քան թէ Բարեգործական ընկերութեանը, որը ունի իր գործողութեան որոշ շրջանը և միջոց-ները: Բայց այդ, կարծում եմ, որ անհեռաւե-սութիւն կը լինէր նախաւանդ սովորութիւնը և արդէն միանգամ ընդունված կարգը փոխելով՝ ժո-ղովրդի մէջ տրուած յարուցանելու առիթ տալ:

Գանձապահ կոնսիստորիայի
Գէորգ քանանայ Գալստեանց
ՆՅՈՒՐԻՆ ԼՈՌԻՆՔ

Մեզ հաղորդում են, որ կովկասեան Գիւղա-ատեսակաւ ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնի համար ի նկատի ունեն իշխան Պ. Գրուզինսկուն:

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետէվ և թիֆլիսի նահանգապետ իշխան Շերմախիձէ մտադրութիւն ունեն, մայրաքաղաքի լրագրիւնների ասելով, փետրվարի վերջին ճանա-պարհ ընկնել Պետերբուրգից դէպի Կովկաս:

Մեզ հաղորդում են Ալեքսանդրօպօլից, որ Ամենայն հայոց կաթողիկոսը հեռագրով յայտնել է, որ այդ քաղաքի յաջորդ է նշանակվում Գով-հանէս վարդապետ Շերակունի:

Կիրակի օր, փետրվարի 18-ին, երեկոյեան 7 ժամին, Վրօնցովի արձանի մօտ, անյայտ մի մարդ ատրճանակ արձակեց վաճառական Գրի-գոր Սրբականեանցի վրա: Սրբականեանց վաճառ-կանի մօտ, որը իջնանել էր «Յնտրալայն» Կո-միտէի հիւրանոցը, գալիս է իր նախկին մի ծա-նօթը և նրանից փող է պահանջում: Վաճառա-կանը նրան առաջարկում է 5 ռուբլի: Սակայն պահանջողը աւելի է ուզում, և երբ Սրբակա-նեանց մերժում է, իսկոյն ատրճանակ է արձա-կում: Գնդակը դիպում է ոտին, այնպէս որ վէրքը միանգամայն անվատանք է: Վիրաւորողին անմիջապէս տարան ոստիկանատուն, որտեղ ինքը պօլիցիմէյստերը անձամբ հարցուփորձի ենթար-կեց նրան: Տեղակալ լրագրիւնները հաղորդում են, որ դա նոյն մարդն է, որ մի քանի օր ա-ռաջ Վիրաւորեց Գալստեան անունով մէկին, որը այժմ պառկած է Միքայէլեան հիւանդանոցում:

«Московскія Вѣдомости» լրագրում կարդում ենք. «Պետերբուրգում հաւաքվել են բոլոր գեներալ-նահանգապետները, բացի հարաւ-արե-մտեան չրջանի նահանգապետից, որը սպասվում է մեծ պատի շորթորդ շաքարի: Մեծ պատի երկրորդ շաքարը կարող էր կուլիասի ան գործերի շաքար անուանվում: Այսօր (երկու-շաբթի) Մինիստրների Մասնաժողովում կար-դացվում են կովկասեան նահանգապետների ամենահաւատակ հաշիւները. վաղը Պետական խորհրդում կը քննվեն Անդրկովկասի վարչու-թեան վերաբերեալ դանազան պրինցիպիական հարցեր. հինգշաբթի տեղի կունենայ առանձին խորհրդակցութիւն ս. սինօդի օբէր-սրօկոբորի մօտ՝ աղան Գալստեանի գլխի գլուխի առի-թով՝ ներքին գործերի և արքայադպրատութեան մինիստրների ու կովկասեան բարձր վարչութեան մասնակցութեամբ:»

Կովկասի կառավարչապետի վերադառնալուց յետոյ, «Черн. Вѣст.» լրագրի ասելով, մի քանի փոփոխութիւններ են սպասվում մեր երկրի բարձր վարչական հիմնարկութիւնների մէջ: Կա-ռավարչապետի ներկայացրած բոլոր նախագծերը ընդունված են Պետերբուրգում:

Պետերբուրգի «Земледѣльческая Газета» լրա-գիրը հաղորդում է. «Գործ գաւառի կալուածա-տէրերը խնդրել են տուել կրկնապատկեան մինիստրութեան հաստատելու նրանց «ընկերակ-ցութեան» կանոնադրութիւնը: Ընկերակցութեան նպատակն է օգնել իր անդամներին, որ էժան գնով ձեռք բերեն զանազան գործիքներ և սպա-ռելու նիւթեր, վաճառեն ձեռնառ գներով կա-լուածքներից ստացած արդիւնքները, դրամական փոխառութիւն տան այն կալուածատէրերին, ո-րոնք կը յանձնեն ընկերակցութեան իրանց ապրանքները ծախելու, և կատարեն այն բոլոր յանձնարարութիւնները, որոնք վերաբերում են գրեւորատեսութեան:»

Երկրագործութեան մինիստրութիւնը, ցանկա-նալով ասարածել ծխախոտի բաժնի և կոչ-ված տեսակը մեր երկրում, ուղարկել է սերմեր կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը, որ ստացած է Լօրենքից, Գեոլոգիկից, Ագրի-կից և Մարիակալայից: Միախոտագործները կա-րող են ձեռք բերել այդ տեսակ սերմերը ձրի և փորձեր անել:

Ա.Լ.ԲԱՍՆԻՍԻՍԻՍ մեզ գրում են. «Բազմա-վարդապետ Թաւադեան այս օրերս կը հեռա-նայ մեր քաղաքից: Լուսն ենք, որ նա տեղա-փոխվում է Գանձակ: Փետրվարի 14-ին նա մա-տուցեց իր վերջին պատարագը, որի ժամանակ մի գեղեցիկ քարոզ խօսելով, մնաք բարով ասեց հասարակութեան: Պատրաստութիւններ են տես-նում ի պատիւ համակրելի յաջորդի մի ձախե-րոյթ տալու համար:»

Գ.Ա.ՅԱԿԻՅԻՑ մեզ հաղորդում են, որ քաղաքի հայ ընտրողների կողմից նահանգական ատես-նին տուած բողոքը, որ վերաբերում էր քաղա-քային ընտրութիւններին, ատեսանը թողել է առանց հետեւնելի: Ատեսանի անդամներից մէկը՝ պրօկուրօրը, մնացել է առանձին կարծիքի: Իսկ ներքին գործերի մինիստրին ուղարկած բո-ղոքի մասին դեռ որ և է պատասխան չէ ստաց-ված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Ռուսաց գործակալութեան հաղորդած տեղեկու-թիւններին, Չէյթովի հայտնութեան մասին, կա-րող ենք աւելացնել հետեւեալ տեղեկութիւնները, որ գրում են մեզ Կ. Պօլսից, փետրվարի 10-ից.

«Գեոսպաստուէնը, թուրք կառավարութիւն և հիւպատոսներ ամենքն ալ կարծեն միաբանած են վերջացած նկատելու Չէյթովի խնդրը: Երկու շաբթի է ի վեր կառավարական շրջանակ-ներում մէջ կը խօսուի թէ Չէյթովն յաղթուած է գրաւուած է, նոյն իսկ Սուլթանը միւշիւրու-թեան ատարիճայ տուաւ Չէյթովին պաշարման հրամանատար լինելու փաշային: Իսկ դեսպանա-տունները հասած լուրեր կը հաստատեն թէ Չէյթովին ասպատակները ընդունած են առաջար-կուած հաշտութեան պայմանները, որով Չէյ-թովն իր շրջակայներով հայ կառավարիչի մը իշ-խանութեան ներքեւ առանձնաշնորհաւ նահանգ-իւ պիտի ըլլայ, հայերը 5 տարի տուրք պիտի չը վճարեն, կառավարութիւնէն գրաւուած գէնթե-րը պիտի յանձնեն և օտար երկրներէն Չէյթովն մտած ասպատակութեանը պիտի արտաքսուին: Հասած տեղեկութիւնները կաւեցնեն նաեւ, որ հայտնութեան պայմանները կը գործադրուին եւ-րօպական հիւպատոսներու ներկայութեամբ և հայ յեղափոխականները հետզհետէ կը մեկնին: Թէ որ աստիճան հաւատք պէտք է ընծայենք այս լուրերուն, չենք կրնար այս ժամուս որոշա-պէս գիտնալ:»

Այս օրերս հրատարակվեց Հայաստանի վե-րաբերեալ երրորդ «Կապուտ» գիրքը: Առաջին «Կապուտ» գրքում ամփոփված են Սասունի կո-տորածներին վերաբերեալ պաշտօնական տեղե-կութիւնները. երկրորդում ամփոփված են պե-տութիւնների մէջ տեղի ունեցած գրագրութիւն-ները Փոքր-Ասիայի ընթացիկների հարցի մասին, իսկ վերջին օրերը հրատարակված երրորդ «Կա-պուտ» գրքում, բացի այդ գրագրութիւնների շա-րունակութիւնից, տալիս են նաեւ օսմանեան կայսրութեան զանազան տեղերում գտնվող բրի-տանական հիւպատոսների զեկուցագրերը և վեր-

ջապէս կոտորածների վիճակագրական ցուցակը, որը կազմել է վեց եւրօպական դեսպանների պատուիրակների յանձնաժողովը, հիմնվելով հիւ-պատոսական տեղեկագրերի փաստերի վրա: Այդ վիճակագրութեան համաձայն, սպանվածների թիւը, որ ապացուցված է անհրաժեշտ փաստե-րով, հասնում է 25,000-ի: Սըր Ֆիլիպ Կէրրի իր 1896 թ. յունվարի 30-ի հեռագրով յայտնում է բրիտանական մինիստր-նախագահին, թէ զսհեր թիւը չէր կարելի ճշգրտելու որոշել, հաստատ տեղեկութիւնների պակասութեան պատճառով, մանաւանդ խարբերելի և վանի նահանգների վե-րաբերմամբ:

Իշխան Լօբանովի կարծիքը հաղորդել է լօրդ Սոլսբերիին Պետերբուրգից, 1895 թ. նոյեմ-բեր 4-ի հեռագրով. ռուսաց արտաքին գոր-ծերի մինիստրը յայտնել է, թէ չը նա-խելով, որ ընթացիկների մասին իրադէն հրատա-րակվել է, բայց դեռ երկար ժամանակ պէտք է սպասել մինչև կը բարեօրէի այն ցաւալի վիճա-կը, որ առաջ է եկել մուսուլմանների և հայերի ազդեցութեան: Այդ ազդեցութեան մինիստրը հա-մարում է բնական հետեւեալ գործողութեան այն խիստ ձեռի, որ ցոյց տրվեց հայոց հարցում:

Իշխան Լօբանովը—ասված է հեռագրի մէջ—չը ծածկեց իր կարծիքը, թէ նա, գլխաւորապէս, Անգլիային է համարում պատասխանատու գոր-ծերի այդ տեսակ վիճակի համար, այն պատճա-ռով, որ հայ կոմիտէի գործունէութիւնը քա-ջալերում է ինչ Անգլիայի նշանաւոր անձներից շատերը:

Սըր Ֆիլիպ Կէրրի նոյեմբերի 25-ի հեռագրով հաղորդում է, թէ ինքը առաջարկեց դեսպաննե-րի ժողովում պնդել պատասխանատու առաջին մինիստր նշանակելու մասին: Ռուսաց դեսպանը հակառակեց դրան այն հիման վրա թէ՛ առա-ջին՝ սուլթանը չի համաձայնի և երկրորդ՝ այդ-պիսի մի պահանջ անելը կը նշանակէ միջամտել թիւրքիայի ներքին գործերին:

Բարոն Բլանի հիւտեմբերի 26-ին բրիտանական դեսպանին ուղարկած հեռագրի մէջ հաղորդվում է, թէ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միաբան գործողութեան շրջանը վերջացած պէտք է համարել ընթացիկների մասին սուլթանի արած խոստումով, բայց որովհետեւ Փոքր-Ասիայից դեռ էլի վատ լուրեր են հասնում, ուստի խաղախ, Աւստրիայի և Գերմանիայի հետ, պէտք է միջ-նորդէ Բ. Գրան առաջ հայերի համար:

Խարբերելի և վանի նահանգների զսհերի թիւի մասին, որի վերաբերմամբ սըր Ֆիլիպ Կէրրի յայտնում է, թէ դեռ չենք տեղեկութիւններ չը կան, այժմ հրատարակված են հետեւեալ տեղե-կութիւնները Լօնդօնի լրագրիւններում:

«Յուրացվել, կազմված է 1896 թ. յունվարի 15-ին, նրա մէջ առաջ են բերված հետեւեալ փաստերը. Խարբերելի նահանգում և նրա 59 գիւ-ղերում, Արաբներում, Մալակիայում, Էդիսում, Կաբան-Մադանում, Տէրսիմում և Բալուում ու սրանց գիւղերում՝ Սպանված բրիտանականների թիւը . . . 29,544 Այրված . . . 1,383 Սպանված ուսուցիչների, քարոզիչների և քահանաների թիւը . . . 51 Սովից և ցորից մեռածների թիւը . . . 3,266 Որոնք գտնվել են մեռած դաշտերում և ճանապարհներում . . . 4,330 Որոնք վախճվել են սրտաճառ եղել . . . 760

Վեռածների գումարը 39,334 Վիրաւորվածներ . . . 8,000 Այրված տներ . . . 28,562 Աւերված եկեղեցիներ, վանքեր և դպ-րոցներ . . . 227 Անպատած կանայք և աղջիկներ . . . 5,530 Բռնի կերպով ամուսնացրած թիւրքերի հետ . . . 1,532 Բռնի իսլամացրած . . . 15,179 Այդ բոլորը կատարվել է 1895 թ. հոկտեմ-բերի 1-ից մինչև 1896 թ. յունվարի 15-ի ժա-մանակամիջոցում:

Կ. Պօլսից հեռագրում են «Daily Chronicle» լրագրին, որ բացի Ռեֆուայում եղած կոտորածից, կոտորածներ են տեղի ունեցել նաեւ Արիւսի և Խարբէրէի նահանգներում:

Թիւրքերը Մարտոնիում պահանջել են, որ քաղաքի բոլոր հայ բնակիչները իսլամութիւն ընդունեն, 500 հայ իսլամութիւն ընդունեցին,

իսկ 150 հայ, որոնք չը կամեցան կրօնափոխ լինել, սպանվեցին:»

Կ. Պօլսից գրում են «Моск. Вѣд.» լրագրին. «Սըր Ֆիլիպ Կէրրիի յաջորդը Կ. Պօլսում, հաւա-նօրէն, կը լինի լօրդ Կրօմլը, իսկ սրա յաջորդը Եգիպտոսում, երեկ կը լինի սըր Դրօմօնդ Վօլֆ, որը լաւ ծանօթ է երկրի հետ և երբ գործը իր անձնական սնտախօսութեան չէ վերաբերում, շատ մեծ ճարպիկութիւն է ցոյց տալիս:»

«L'Observatore Romano» լրագրի մէջ, որ պալի-օրգան է համարվում, «Povera Armenia» վերնա-գրով մի առաջնորդող յօդուած է տպված, որով հրաւէր է կարգադրում կաթօլիկ Խաղիային և աշխարհին՝ օգնութեան ձեռք մեկնել թիւրքիայի թշուառ քրիստոնէաներին: Յօդուածը վերջա-նում է այս խօսքերով. «Խաղիայի և ամբողջ աշխարհի կաթօլիկներ, պատասխանեցէ՛ք մեր հրաւէրին, օգնէ՛ք Հայաստանին:»

Լօնդօնից գրում են «Новости» լրագրին. «Մի-նիստրութիւնը և նրա կուսակիցները գրգռված են հայոց հարցի մէջ ունեցած անաջողութեան պատճառով: Այդ գրգռումը այն ատիճանի է հասել, որ Գօշէն հրապարակով յայտնեց, թէ Անգլիան սպառազանք աղաւթ է համարում իրան որ և է պարտաւորութիւնից պաշտպանել սուլթա-նի տիրապետութիւնը Փոքր-Ասիայում, Կիպրոսի դաշնագրի համաձայն: Հիմարտ է, Գօշէն յայտ-նեց այդ իբրեւ անձնական կարծիք, բայց նա եր-բէք այդ լեզուով չէր խօսի պարամէնտում, իր պաշտօնակիցների ներկայութեամբ, եթէ նրա խօսքերը լուրջ նշանակութիւն չունենային: Ահա այդ պատճառով հաստատ կարելի է համարել, որ Անգլիան հրաժարվում է Կիպրոսի դաշնա-գրից, թէ և նա Կիպրոս կղզին յետ չի տալ:»

«Times» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, թէ յեղափոխական հրաւիրաթղթերը տարածվում են մեծ քանակութեամբ քաղաքի ամենահեռաւոր մասերում՝ արքանականութիւնը վիճաւորված ազնու-ների ձեռքով: Ոստիկանութեանը հրամայված է չը խառնվել այդ գործի մէջ, որովհետեւ պալա-տում երկիրը են կրում, որ զէնքի գործադրու-թիւնը կարող է սարսափելի ներգործութիւն ու-նենալ ժողովրդի վրա: Բոլոր հրաւիրաթղթերը դէմ են ոյժ գործածելուն:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՅ

Ա. ր ա կ ա կ ա (Գոլիանա)

Յունվարի 26-ին Անցեալ նամակով հաղորդեցի ձեզ, որ ամ-սիս 9-ին պիտի հեռանայի այս երկրի մայրա-քաղաքից՝ խոր անտառները մտնելու համար, ուր միակ աղգաբնակիչները բաղկացած է ու-կի որոնողներէր և նրանց պաշտօնեաներից ու մշակիչներից:

Առաջինները շատ անգամ բերում են իրանց հետ իրանց ընտանիքը, իսկ եթէ երեխաները արդէն բաւական մեծ են և պիտի ուսումնարան երթնեն, այն ժամանակ նրանց թողնում են քաղաքում: Բայց ինձ շատ դարմարեց անգլիա-ցի երիտասարդ նորապսակ կանանց քաջութիւ-նը, որոնք քաղաքների կենտրոն և յարմարու-թիւններին ընտելացած՝ իրանց ամուսիններին հետեւում են անտառը և ամեն տեսակ զրկանք-ներ են կրում՝ ամբողջ աշխարհից հեռու, առանձնութեան մէջ: Պատահ հասնում է չա-բաթ մի անգամ, իսկ եթէ եղանակը նպաստա-ւոր չէ, սրանից էլ ուշ, բայց այնու ամենայնիւ զուարթ և քաջ են մնում: Չքաղվում են տան անտառութիւնով, ցանում են բանջարեղէններ և բուսցնում են մրգաճառեր և ծաղիկներ, որոնց տեսակները բազմաթիւ են և գեղեցիկ թէ՛ գոյ-ներով և թէ՛ անուշ են հոտով: Ամեն տան, կամ լաւ է ասել, խրճիթի մէջ կը տեսնէք մի վորդիկ գրադարան: Տիկիւններից մինի մօտ ես տեսայ ջուլիթակ, որի վրա նա անում էր և ուրախ կեր-պով ինձ պատմում էր, որ Անգլիայից բերել տուեց իր համար պիտի ու, որն արդէն հասել է Ջօրջտաուն և որ ինքը չուտով գնալու է քաղա-քը, իր պիտան այնտեղից:»

*) Խրճիթներից շատերը բաւական հեռու են նաւահանգիստներից և այնտեղ հասնելու համար հարկաւոր է երեւմն 3—4 ժամ օտով գնալ խոր անտառով, ամենանեղ ճանապարհներով:

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз